Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ Սյունիքի մարզպետարանում 2013 թվականի երրորդ եռամսյակում քաղաքացիների ընդունելության և նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին

ՀՀ Սյունիքի մարզպետարանում 2013 թվականի երրորդ եռամսյակում քաղաքացիներից ստացվել է 485 դիմում, որից 477-ը՝ աջակցության խնդրանքով, 5-ը՝ բողոք, 1-ը՝ առաջարկություն, 2-ը՝ հարցում:

Գյուղատնտեսական, կոմունալ-կենցաղային, բնակարանային, նպաստի և կենսաթոշակի հարցերի վերաբերյալ 37 դիմումներից 30-ին տրվել են սպառիչ պատասխաններ: Հողօգտագործման և հողհատկացման վերաբերյալ 2 դիմումներին տրվել է դրական լուծում: Աշխատանքի տեղավորման և հաշվառման մասին 64 դիմումներից դրական լուծում է ստացել 12-ը, 7 դիմումների վերաբերյալ մարզպետի կողմից միջնորդություններ են ներկայացվել համապատասխան կազմակերպություններ՝ աշխատանքի տեղավորման հարցում օժանդակելու նպատակով, մյուսները՝ հաշվառվել են:

Տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների իրավասություններին առնչվող 24 դիմումներ վերահասցեագրվել են համապատասխան համայնքների և կազմակերպությունների ղեկավարներին:

Նյութական օգնության խնդրանքով մարզպետին դիմած 235 քաղաքացիներից դրամական օգնություն է ցուցաբերվել 110 քաղաքացիների: Անվճար բուժսպասարկման խնդրանքով դիմած 14 քաղաքացիներից բավարարվել է 9-ի խնդրանքը, 8 քաղաքացու տրվել է ծննդօգնության պետական հավաստագրի տրամադրման միջնորդություն, 3 հոգու՝ առողջարանային բուժման ուղեգիր:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը: 2013 թվականի երրորդ եռամսյակում կատարվել է 188 քաղաքացիների ընդունելություն:

Բացի այդ, մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ կատարվել են քաղաքացիների արտահերթ ընդունելություններ:

Մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում քաղաքացիների անհատական ընդունելությունը կազմակերպվել է ամենօրյա, աշխատանքային կարգով:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիների դիմումների, բողոքների ու առաջարկությունների վերաբերյալ

/2013թ. 3-րդ եռամսյակ/

1. Ստացվել են նամակներ ընդամենը	749	485
որից՝	1-ին կիս.	3-րդ եռ.
աջակցություն	739	477
առաջարկություն	2	1
հարցում	3	2
բողոք	5	5
այդ թվում՝		
կրկնակի	4	6
կոլեկտիվ	2	4
3. Ըստ հարցի բնույթի՝		
բնակարանային	5	6
կոմունալ-կենցաղային	10	19
շինարարական	6	12
արդձեռ/տրանսկապ/	4	1
գյուղատնտեսական	5	7
բնութ. պահպանութ.	-	-
առևտրի	1	1
կենսաթոշակի և նպաստի	10	5
առողջապահության	166	48
կրթական և մանկ.հիմն	111	35
գիտութ.կուլտուրա	-	-
ֆինանսական	346	235
օրենսդրական	1	3
քաղ. և որդեգրման	4	3
աշխ.տեղ և հաշվառման	30	64
հողհատկացում և հողօգտ.	6	2
ապարատային	23	19
այլ հարցեր	21	25